

Թիւ 25518

Դեկտեմբեր 16, 1977

Ազնուափայլ  
Տիկ. Ս. Գալէնտէրեան-Կէվրէկեան  
նիւ Եորթ.

Ազնիւ Տիկ. Գալէնտէրեան-Կէվրէկեան,

Ստացած ենք ձեր երկտողը եւ ներփակեալ 100 --հարիւր--  
տողարի նուիրատուութիւնը՝ ի յիշատակ ձեր հօր Գարեգին  
Գալէնտէրեանի:

Այս առթիւ մեր շնորհակալութիւնն ու գնահատանքը կը  
յայտնենք Առաջնորդարանիս հանդէպ ձեր ցոյց տուած հետա-  
քրքրութեան համար եւ կ'աղօթենք որ Տէրը իր երկնային  
լոյսերուն մէջ հանգչեցնէ բազմավաստակ եւ Հայց. Եկեղեց-  
ւոյ պայծառութեան համար իր մատուցած ծառայութիւններով  
ծանօթ ձեր հօր հոգին:

Մենք եւս փառք կու տանք Աստուծոյ որ ձեր զաւակին՝  
ձէքի վիրաբուժական վտանգաւոր գործողութիւնը յաջողու-  
թեամբ անցաւ եւ ան շուտով վերագտաւ իր առողջութիւնը  
ու այժմ կը շարունակէ եկեղեցանուէր ու կրթանուէր իր  
գործունէութիւնը:

Կը շնորհաւորենք մօտակայ տօնական օրերը՝ եւ ձեզի  
ու ձեր հարազատներուն կը մաղթենք առաւել առողջ ու եր-  
կար կեանք:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ  
Առաջնորդ

Յ.Գ. Հաճեցէք ներփակ գտնել Առաջնորդարանիս ստացականը:

Dear Bishop  
is Thanksgiving  
most of all To Our Sons

Jack Gevrekian's Recovery

it is so little we donate <sup>To</sup> our church  
with all our heart we are not  
rich but we have a heart made  
8 is my Father's anniversary he gave his life  
To church 45 years old

Diocese of the Armenian Church of America  
630 Second Avenue, New York, N.Y. 10016

Dear Sirs: *This is for memory KAREKIN  
KALENDERIAN*  
We are pleased to contribute to the 1977 Christmas  
Appeal of the Diocese of the Armenian Church. *Founder of Holy  
Cross Church*  
We have enclosed our check in the amount of \$ 100.00

Name SERENE KALENDERIAN *GEVRE*  
*KIAN*  
Address 18 Fernwood Lane Roslyn  
City NASAU CITY State NY Zip 11576

*The enclosed envelope does not require a stamp,  
which the Church must pay on receipt. You can save  
the Church this cost by putting a stamp on the envelope  
before mailing. Thank you.*